ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> 07 2017թ N 53

ք. Եղեգնաձոր

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ,ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ.մայիսի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի, ՀՀ Կառավարության 2011թ-ի մարտի 3-ի <<Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման,շահաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 202-Ն որոշման ենթակետի դրույթներով՝

Որոշում եմ՝

1.,, Վայքի ԲԿ,, ՓԲԸ

2016թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 529.2 հազ.դրամ,շահութահարկի նվազեցումից հետո՝423.4 հազ.դրամ:ՀՀ պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով,որը կազմում է 211.7 հազ.դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2017թ-ի հոկտեմբերի 1-ը:

2.,,Ջերմուկի ԱԿ,, ՓԲԸ

2016թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 11.0 հազ.դրամ,շահութահարկի նվազեցումից հետո՝ 9.0հազ.դրամ:ՀՀ պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով,որը կազմում է 4.5 հազ.դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2017թ-ի հոկտեմբերի 1-ը:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ